հավաքելու և ներկայացնելու անհրաժեշտությունն ու այդ գործողությունները փաստացի կատարելու հանգամանքը, գործի քննությանը մասնակցության աստիճանը),

2) գործի բարդությունը (վիճելի իրավահարաբերության բնույթը, գործի քննության տևողությունը),

3) նմանատիպ գործերով պրակտիկայում ընդունված փաստաբանական ծառայության մատուցման դիմաց վճարվող գումարի չափը, 4) դատական ակտով բռնագանձվող գումարի և պահանջվող փաստաբանական վճարի չափի հարբերակցությունը:

Դատարանն արձանագրում է, որ Հայցվորի կողմից ներկայացվել է «Ագաստ» ՍՊԸ-ի և «Օհանյան և Գործընկերներ» ՍՊԸ-ի միջև 17.04.2024թ. կնքված թիվ 1704/24 փաստաբանական ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրից քաղվածք, որի 3.1 կետի համաձայն՝ ծառայությունների մատուցման գինը կազմում է 300.000 ՀՀ դրամ: Դատարանը հիմք ընդունելով նշված իրավակարգավորումները և վերլուծելով քննված գործի առանձնահատկությունները գտնում է, որ ուշադրության է արժանի և գնահատման են ենթակա հետևյալ փաստերը՝

- գործը քննվել է հատուկ հայցային վարույթի կարգով՝ առանց դատական նիստերի,

- ներկայացված ապացույցները չեն պահանջել հավաքագրմանն ուղղված էական ջանքեր և հանդիսացել են Հայցվորի տիրապետմանը ենթակա ապացույցներ,

- ծառայություններն ըստ էության արտահայտվել են հայցադիմումի կազմամբ և դատարան ներկայացմամբ:

Վերոգրյալի արդյունքում Դատարանը գտնում է, որ սույն գործով փատաբանի խելամիտ վարձատրության չափ է հանդիսանում 50.000 ՀՀ դրամը, որը և՝ հաշվի առնելով հայցի ամբողջությամբ բավարարումը, ենթակա է հատուցման Պատասխա-նողի կողմից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 188-189-րդ, 191-192-րդ, 198-րդ, 234.12-ր, 362-րդ հոդվածներով՝

Վ Ճ Ռ Ե Ց

1. «Ագաստ» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ պատասխանող «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի բավարարել. «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից

վերջինիս և «Ագաստ» ՍՊԸ-ի միջև 30.01.2024 թվականին կնքված թիվ «ՍՄԳԲԿ-ԳՀՍՊՁԲ-24/2/5» ծածկագրով պայմանագրի միակողմանի լուծումը ճանաչել անվավեր:

2. Որպես դատական ծախս «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ից հօգուտ «Ագաստ» ՍՊԸ-ի բռնագանձել՝

2.1. 30.000 (երեսուն հազար) ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար.

2.2. 50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամ՝ փաստաբանի խելամիտ վարձատրության գումար: Մնացած մասով դատական ծախսի բռնագանձման պահանջը մերժել և դատական ծախսերի բաշխման հարցը համարել լուծված:

3. Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի Հարկադիր կատա-րումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

4. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Դանիել Միսեյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am